G-4 տիպի բնական գազի կենցաղային հաշվիչի տեղադրման հանգույցի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1. Նշանակությունը | 1.1 | Բնական գազի կենցաղային հաշվիչի արկղը և միացնող հանգույցը (այսուհետ Հանգույց) նախատեսված է հաշվիչով համալրված չափիչ սարքերի համար՝ մթնոլորտային տեղումներից, արտաքին միջամտություններից պաշտպանելու, գազի լրացուցիչ մաքրման և գազի հոսքը բացելու ու փակելու նպատակով: |
| 2. Հանգույցին ներկայացվող հիմնական պահանջները | 2.1 | Հանգույցը պետք է բաղկացած լինի պաշտպանիչ արկղից և միացնող տարրերից: |
| 3. Հանգույցին ներկայացվող տեխնիկական պահանջները | 3.1 | Հանգույցը պետք է պատրաստված լինի համապատասխան հետևյալ տեխնիկական պահանջներին ու ներկայացված գծագրերին: Արտադրողի կողմից ներկայացված Հանգույցի արտադրության Տեխնիկական պայմանները պետք է հաստատված լինեն ՀՀ օրենքով սահմանված կարգով: |

| հ/հ | Պարամետրի անվանումը | Պարամետրը |
|---|---|---|
| 3.1 | Արկղ | |
| 3.1.1 | Արղի վերին նիստի (երեսակի) վրա անցքերի միջառանցքային հեռավորությունը, մմ | 110 |
| 3.1.2 | Արղի վերին նիստի (երեսակի) վրա անցքերի տրամագիծը, մմ | 21 |
| 3.1.3 | Արկղի եզրաչափքերը ոչ ավել, մմ<br>- բարձրությունը<br>- լայնությունը<br>- խորությունը | <br>278<br>245<br>185 |
| 3.1.4 | Արկղի նյութը | համաձայն 4.2 կետի |
| 3.1.5 | Արկղի դռնակ | |
| | Չափսերը, մմ | հաշվիչը արկղում ազատ հավաքակցելու (տեղադրելու) հնարավորություն |
| | Դիտապատուհանի չափսերը, ոչ պակաս, մմ | 110 x 103 |
| | Դիտապատուհանի նյութը | թափանցիկ անդրամանուշակագույն ճառագայթներին կայուն, ժամանակի |

| | | |
|---|---|---|
| | | ընթացքում չմքացող նյութ, հարվածադիմացկուն |
| | Կիպությունը | առանց ճեղքերի |
| 3.1.6 | Արկղի կոշտություն | համաձայն 4.3 կետի |
| 3.1.7 | Պոլիէթիլենե փռաններ | համաձայն 4.6 կետի |
| 3.1.8 | «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ լոգոտիպը | համաձայն 6.1 կետի |
| 3.1.9 | Արկղի գույնը | դեղին |
| 3.1.10 | Ամրացման անցքեր, 3 հատ, մմ | 5.5 |
| 3.1.11 | Դատարկման անցքեր, 2 հատ, մմ | 5 |
| 3.1.12 | Կապարակնքման անցքեր, մմ | 2 |
| 3.1.13 | Որակը | համաձայն 4.10 կետի |
| 3.2 | **Միացման հանգույց** | |
| 3.2.1 | Արույրե գնդաձև փական, արտաքին և ներքին պարուրակով, կարճ բռնակով | 3/4˝, ըստ ԳՕՍՏ |
| 3.2.2 | 11/4˝ երքին և 3/4˝ արտաքին պարուրակով հատուկ ագուցամանեկ | ըստ գծագրի |
| 3.2.3 | Պարուրակի որակը | ազատ պտտում, ըստ ԳՕՍՏ 6357-73 |
| 3.2.4 | Պարոնիտե 11/4˝ միջադիր | 2 հատ |
| 3.2.5 | Գնդաձև փականի կապարակնքման տուփ | ըստ գծագրի, համաձայն 4.12 կետի |
| 3.2.6 | Գազի զտիչ | ըստ գծագրի |

**4. Հանգույցին ներկայացվող մեխանիկական պահանջները**

4.1 Արկղի արտաքին տեսքը պետք է համապատասխանի հավաքման գծագրին, իսկ եզրաչափքերը համաձայն աղյուսակի կետ 1-ի պարամետրերին:

4.2 Արկղի նյութը՝ հարվածադիմացկուն անդրամանուշակագույն ճառագայթների, ինչպես նաև դրական և բացասական ջերմաստիճանների տատանումների նկատմամբ կայուն պոլիմեր:

4.3 Արկղի կառուցվածքը պետք է լինի կոշտ և թույլ չտա շեղումներ անկյունագծով:

4.4 Արկղի դռնակը պետք է կիպ հարի իրանին, բացառելով մթնոլորտային տեղումների թափանցումը արկղի մեջ և ունենա արկղի հետ կապարակնքման անցք (անցքեր):

4.5 Արկղի դռնակը կարող է ամրանալ իրանին, ինչպես ծղնու միջոցով, այնպել էլ այլ հուսալի եղանակով:

4.6 Խոնավության ներթափանցումը բացառելու նպատակով իրանի մուտքային ու ելքային խողովակաուտերի միջև անհրաժեշտ կիպություն ապահովելու համար արկղի վերին նիստի անցքերում տեղադրվում են պոլիմերային նյութերից վռաններ:

4.7 Արկղի դռնակի վրա պետք է լինի դիտապատուհան, ներսից հուսալիորեն ամրացված, համաձայն 3.1.5 կետի:

4.8 Արկղի հետի պատին պետք է լինեն անցքեր՝ ամրացման համար, իսկ հատակին՝ ջրահեռացման անցքեր:

4.9 Մուտքային և ելքային խողովակաուտերի և հաշվիչների բկանցքների միացումը իրականացվում է ազուցամանեկների միջոցով, իսկ կիպությունը ապահովվում է պարոնիտե կամ յուղաբենզինակայուն ռետինից:

4.10 Մատուցվող գազի լրացուցիչ մաքրման համար հանգույցը պետք է ներառի դյուրահան զտիչ, ցանցը ըստ ԳՕUS 6613 բջջի չափը ոչ ավել 0.5մմ-ից, մետաղալարի տրամագիծը՝ 0.22մմ:

4.11 Հանգույցի հատուկ ազուցամանեկը ներկվում է դեղին գույնով, որակը ըստ ԳՕUS 9.301-86:

4.12 Գնդաձև փականի կապարակնքման տուփը (Տուփ) պետք է պատրաստված լինի հարվածադիմացկուն անդրամանուշակագույն ճառագայթների, ինչպես նաև դրական և բացասական ջերմաստիճանների տատանումների նկատմամբ կայուն պոլիմերից: Տուփը բաղկացած է երկու կիսաիրաններից, որոնք ունեն կապարակնքման թվով երկու, 2մմ տրամագծով անցքեր: Տուփի ճակատային մասերից մեկի վրա պետք է լինի 3/4˝ պողպատե խողովակի համար նախատեսված անցք, իսկ մյուս կողմի վրա 21մմ տրամագծով անցք՝ նախատեսված մետաղյա ծալքավոր ճկախողովակի համար: Տուփի գույնը՝ դեղին:

**5.Լրակազմությունը**

5.1 Մատակարարման լրակազմը պետք է ընդգրկի՝

- հավաքված արկղ - 1 հատ,
- գնդաձև փական 3/4” - 1 հատ,
- գնդաձև փականի կապարակնքման տուփ - 1 հատ,
- հատուկ ազուցամանեկ 11/4” - 2 հատ,

| | | |
|---|---|---|
| | | - զտիչ - 1 հատ,<br>- պարոնիտե կամ յուղաբենզակայուն ռետինից միջադիրներ, 3 մմ հաստությամբ- 2 հատ,<br>- պտուտակ (шуруп) - 3 հատ,<br>- տափօղակ - 3 հատ,<br>- խցաբութակ (дюбель) - 3 հատ: |
| 6.Պիտակավորումը | 6.1 | Դռնակի ստորին մասում ամրացվում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ լոգոտիպը 90մմx110մմ չափով : |
| | 6.2 | Դռնակի ետնի մասում կատարվում է մակնիշավորում, որը պետք է ներառի՝<br>- պատրաստողի անվանումը,<br>- արտադրատեսակի պայմանական նշանը,<br>- պատրաստման տարեթիվը,<br>- գործարանային համարը: |
| | 6.3 | Պիտակավորման եղանակը պետք է ապահովի մակնշման պահպանությունը ծառայության ողջ ժամկետի ընթացքում: |
| 7. Փաթեթավորում | 7.1 | Արկղի և միացնող հանգույցների անվտանգ տեղափախումը և պահեստավորումը ապահովող փաթեթավորում: |
| | 7.2 | Հանգույցի միացման դետալները տեղադրվում են պոլիէթիլենային փաթեթում և դրվում արկղի մեջ: |
| 8. Երաշխիքը | 8.1 | Հանգույցի երաշխիքային ժամկետը 12 ամիս է պատրաստող գործարանից առաքման օրվանից |
| 9. Ծառայության ժամկետը | 9.1 | Ոչ պակաս 20 տարի |
| 10. Մատակարարման ժամանակացույցը. | | Նախատեսված ծավալների մատակարարումը՝ թվով ___________ հատ, իրականացվում է հավասարաչափ 201_թ. _____ - ____ ամիսների ընթացքում: |

Բնական գազի կենցաղային հաշվիչի տեղադրման հանգույցի արկղ



Գնդաձև փականի կապարակնքման տուփ




11/4՛ներքին և 3/4՛արտաքին պարուրակով հատուկ ագուցամանեկ



Զտիչ՝ I-ին կամ II-րդ տիպաչափի

